

ՏԱՑՈՒ ՅՈՎԵՍԸ

Հօրիցս, մահաբարի Յովեսից, ինձ ժառանգութիւն մնացած կնիքի վերայ փորագրուած է 1802, այդ նրա ծննդեան տարին է:

Հայրս Հասան-ղալեցի էր, 1831 թուին նա գաղթել էր Գ. քաղաքը իւր կնոջ և ամուսնացած բրոջ ընտանիքի հետ: Մահաբարի Յովեսը մի ինքնուս բժիշկ էր և վերաբոյժ: Նա այնքան հետամուտ էր իւր գործին, որ մագաղաթի վերայ արտագրած ժառանգական և անձամբ ձեռք բերած բըժկարաններից զատ բեստինի հատորներն էլ ունէր և դաւական բժշկի հետ մօտ ծանօթութիւն էր պահպանում: Բացի այդ՝ նա հոչակուած էր որպէս հմայող, թէպէտ նա այդ չէր խոստովանում, բայց ես գիտեմ, որ այդ բանը ճըշմարտութիւնից զուրկ չէր, որովհետև իմ և բրոջս, Սօֆիայի, ջերմ հետաքրքրութեան մի առանձին գայթակղութիւն էր տացուի կապոյտ ներկած տօլաբը (պահարանը), ուր զետեղուած էին Սողոմոն իմաստունի գուշակութեան գործիքները և կաշեկազմ գրեթե:

Յիշում եմ իմ կարճիկ, նիհար տացուիս ալեխառն մազերով, լայն և բարձր ճակատի տակ խոր ընկած կրակոտ, բայց մեղմ-բարութիւն արտայայտող սև աչերով, ածիլած սրածայր երեսով և երկար բեխերով: Յիշում եմ նրա մանուսա անթարին, լայն շալով գօտեսորուած, մահուդէ կապոտոյն ջիւբքէն հնութիւնից տեղ կանաչ, տեղ դեղնած:

Մահաբարի Յովեսը թէպէտ յիսուն տարին արդէն բոլորել էր, սակայն միշտ երիասասարդների հետ էր ընկերութիւն անում: Զմրան երեկոները նրա շուրջը հաւաքուող մարդկանց մէջ չեմ յիշում ոչ միայն ծերունիներ, այլ և

իրան հասակակիցներ։ Ամեն երեկոյ Սօֆի բոյրս, մեծ եղբայրս Յովհաննէսը, ես և իմ բոյր Տուտիկը առանց նրա հետ «Եկեսցէ» ասելու տեղերս չէինք մտնում։

Բացի այդ՝ փոքր հասակից մենք տացուիս հետ ամեն կիւրակէ եկեղեցի էինք յաճախում և ես ու եղբայրս շապիկ էինք հագնում և պատարագի ժամանակ երգում։ Հայրս էլ լաւ ձայն ունէր, մեծ տօներին ինքն էլ ժամերգութեան մասնակցում էր։ Նորա համար մի տեսակ առանձին զուարձութիւն էր պարապ ժամերին մեզ հետ եկեղեցական և ժողովրդական երգեր երգել։ Նա սիրում էր աւելի «Նայեաց սիրով», «Առաւօտ լուսոյ» և պատարագի արարողութիւնից նշանաւոր կտորներ։ Այդ վարժութիւնները մանկական հասակից մեր սրաերի մէջ ջերմեռանդութիւն էին զարթեցնում։ Այժմս էլ յիշում եմ, որ երբ եկեղեցում բաղցրաձայն, կանոնաւոր երգեցողութիւն էր լսում, տացուիս սիրալ հըրձում էր, որքան էլ տիսուր տրամադրութեան տակ լինէր, կարծես նրա ցաւերը փարաւում էին այնտեղ և անհետանում, նրա երեսի վերայ նկատելի էր, որ այդ բովակներին վերանում էր շըջապատող կեանից և մի այլ աշխարհ էր տեղափոխում։ Բայց եթէ, ընդհակառակը, պատահում էր նրան խառնուշփոթ, անճոռնի երգեցողութիւն լսել, որքան էր նա տանջւում և վերջապէս այլայլուած թողնում էր եկեղեցին ու հեռանում։

Ուրեմն հայրս եկեղեցասէր էր։ Մեր տան քահանան, ծերունի տէր Սահակը, որ հոչակուած էր հիւանդների վերայ նարեկ կարդալով և իւր տան Ակարմիր աւետարանին ուխտատեղիով, մեզ մօտ միայն տօներին էր գալիս և հօրս ոչ միայն հոգեպէս մսիթարող, այլ և մտերիմ ընկերներն էին հայագէտ Տէր Յակովը և նրա աշակերտ և իմ ուսուցիչ Գասպար Խալֆէն։ Քանի, քանի երկեր, ճառեր, բանասեղծութիւններ գրել է Տէր Յակովը հօրս մօտ անշուք սեղանի առաջ նստած։

Մենք մօրից որբ էինք. վեց տարեկան էի, երբ մայրս վախճանեցաւ փոքրիկ Տուտիկին ծնելիս Խնչպէս ինձ պատմում էին աղգականներս, հայրս ջերմ սիրով կապուած է եղել մօրս հետ և նրա մահից յետ, որքան էլ բոյրը և մօտաւոր բարեկամները, նրա ընտանեսէր բնաւորութիւնը ճա-

նաշելով, համողել են՝ երկրորդ անգամ ամուսնանալ, նա մերժել է միշտ ռկոտրած սիրու ապակու նման էլ չի ամբողջանար, ասել է նա ամենքին, կարկատելուց ի՞նչ օգուտ: Աերջապէս խղճիս ի՞նչ ըսեմ ու որբերիս խորթ մօր ձեռքը տամ, չէ, վաղ արիք, հիմիկուց յետոյ իմ մսիթարանքս որդիքս ենա: Իմ սրտիս մէջ տպաւորուած է մօրս գեղեցկատես և հեղ կերպարանքը: Նա երբեմ ինձ գրկած վաղպում, ծիծաղում և ինձ էլ ծիծաղացնում էր, իսկ երբեմ էլ տան դրան շէմքին նստած, հիանալի կապոյտ աչերը երեսիս էր դարձնում և այդ աշերից կաթիլ կաթիլ արտասուբներ թափում ես յետոյ, հասակս արդէն առած, հասկացայ թէ այդ ինչ դառն կաթիլներ էին, դոքա խեղճ մարդու տանջուած սրտից բղնող արտասուբներ էին: Միտս է նոյնպէս եկեղեցուց բերած ծալովի մի երկար սեղան, ծոյըրերին պղնձէ մոմակալների մէջ վառած հաստ գեղին մոմեր, իսկ սեղանի վերայ սպիտակ ծածկոցի տակ գունաթափի, արիւնաբամ երեսով, աչքերը փակած-տարածուած խղճուկ մօրս և նրա կողքին գետնի վերայ կորադլուխ չոքած տացուիս:

Երբ ես Սօֆի քրոջս հետ սկսեցի ընթերցանութիւն սովորել, մեծ եղբայրս արդէն Չամշեանի համառօտ քերականութիւնը անցել էր և նրա հարուստ քերականութիւնն էր գղում, այնպէս որ ես չեմ տեսել, թէ ինչ կերպ և ինչ ճանապարհով տացուս նրան կարդալ գրել էր սովորցրել: Այստեղ կը պատմեմ միայն իմ և քրոջս աշակերտութիւնը: Երբ առաջին անգամ հայրս մի կտոր քառանկիւնի տախտակի վերայ թուղթ կպցրեց և վրան տպագիր տառերով այբբենը գրելուց յետոյ ինձ և Սօֆիին յայնեց, որ միւս օրը մեզ պէտք է կարդալ սովորցնէ, քոյրս թէպէտ տարի ու կէս ինձանից փոքր էր, բայց շատ սրամիտ, նա ոչ միայն յետ չեր մուռմ ինձանից, այլ և շատ անգամ օգնում էր ինձ:

Երբ մեր տախտակը պատրաստ էր, մենք չկարողացանք մեզ զսպել և գնացինք դրացի ներկարար Մինասի որդուն Յակովինք պարծենալու, թէ մեր տախտակը իր տախտակից գեղեցիկ է: Յակովիքը վեր առաւ մեր տախտակը և այս ու այն կողմը դարձնելուց յետոյ, հեգնաբար ժպաց և արհամարհական ձայնով ասաց՝ «Էս տախտակ չէ»:

— Ի՞նչ, ինչի՞ տախտակ չէ, ի՞նչն է պակաս:

— Այր-ժէ-ճէ-ռա, գին վո-յի-բեն չկա:

— Ի՞նչ, ի՞նչ:

— Ես իմանար, խուլ ես. այր-ժէ-ճէ-ռա, գին վո-յի-բեն չկայ, կիսատ է: Ինի-մին-իմ Աստուած իմ էլ չկայ:

Սօֆին և լեց տախտակը Յակովի ձեռքից և շունչը կտրած վազեց տուն: Ես էլ ամաչած, կորադլուխ, մտած-մունքի մէջ նրան հետևեցի: Երբ տուն հասայ, տեսայ, որ Սօֆին արտասուբ թափելով պատմում է հօրս Յակովի վճիռը:

— Լացդ կարէ, Խելառ, ձեղի պէտք չէ այր-ժէ-ճէ-ռան:

— Ինչի՞ Յակովին պէտք է, մեղ պէտք չէ:

— Երևի Յակովի վարժապետը ինձնից և լոր է:

Սօֆին արտասուբը աչքերին ժպատաց. «Որտեղից խելօք է, ես չեմ գիտեր, Յակովը կուսի մօտ կը կարդայ, էն ի՞նչ է, որ քեզի չափ բան իմանայ:

— Ուրեմն հանգստացիր, ձեղի ինչ որ պէտք է, ես էն կը գրեմ:

Հետևեալ օրը, մենք մեր տան դրան մօտ տացուիս հետ նստած, երեսներս խաչակնքելուց յետոյ սկսեցինք տառերի անունները հին ձևով սովորել: Միայն մի զանազանութիւն կար հօրս ուսուցման եղանակի և նահապետական այրբեն սովորցնելու մէջ. մի բանի տառ սովորցնելուց յետոյ, նա հարկադրում էր մեղ կողքին դրած գրքի մէջ նոյն տառերը դանել: Երկու շարաթ չանցած մենք սովորեցինք թէ տառերի անունները և թէ ճանաչելու:

Հօրս ամէն բանի մէջ ինքնուրոյն գործելու յատկութիւնը այստեղ էլ երևաց: Փոխանակ այրենարան սովորցնելուց յետոյ, կանոն սաղմոս, սաղմոս, ժամագիրը, Նարեկ ևն անցնելու, նա թղթի վերայ տպագիր տառերով իրար կապած խօսեր էր գրում և մեղ վարժեցնում, յիշում եմ նրա դրածներից՝ պուռ ու երդիկ, ատուն ու տեղզ, պուռ գլուխ, ներս ու գուրս ևն. մեր կարդացածը հասկանալի բառերով մեղ աւանդելը մի ինքնուս բժշկի կողմից հիանալի էր, բայց դրանով մեր ընթերցանութիւն սովորելու տանջանքը չհեշտացաւ: Մեր մատղաշ ուղեղերը պէտք է այնու ամենայնիւ իւրացնէին այնպիսի խրթին բաներ, ինչպէս դա-վո-հիւն-ռայ, ե-րէ-թո-ինի-բէ ևն: Աչ հօրս համ-

քերութիւնը, ոչ իմ աշխատասիրութիւնը և ոչ Սօֆիի սրամ-
տութիւնը չեին օգնում մեզ առաջ գնալու և մենք՝ ի զուր
քրտնատանջ թափառում էինք մարդով՝ այն անպառը անա-
պատի երեսին, որին հայերէն ընթերցանութիւն են ասում:
Այս տանջւում էի, բայց Սօֆին հանգիստ բնում էր և, երբ
միւս օրը հայրս համբերութիւնը կորցրած, ասում էր, թէ
«Ե՞րբ պիտի բան սովորիք», Սօֆին կարծես իւր մէջ արդէն
վճռած, յայտնում էր, թէ «Ես չեմ սովորիր»: «Չեմ
հասկնար, ի՞նչ սովորիմ: Վերջապէս մէկ օր Սօֆին դասից
առաջ տացուին հարց տուեց՝ «Տացու ի՞նչ ըսել է. «Տիւն-
է-րէ, տիւն է-րէ»: «Ի՞նչ, ի՞նչ: «Տիւն-է-րէ, տիւն-է-րէ»,
կոկնեց Սօֆին արագ, արագ: Ակեցիր տեսնեմ» և հայրս սկը-
սեց գրել: «Հա՛, դու պիտի գրես, որ կարդաս, մենք ի՞նչ
էնենք, որ գրել չետենք»: Հայրս նայեց Սօֆիի երեսին, գը-
լուխը թափ տուեց և ասաց. «Ի՞նչ յետ եկած աղջիկ ես»,
և տեղիցը վեր կացաւ. «Գնացէք, ևաղացէք»: Մեր դասը
վերջացաւ ոյս անգամ առանց աղօթքի:

Երկու օր հայրս մտածմունքի մէջ ընկղմած, մոլորուա-
ծի նման այս և այն կողմն էր շըջում: Հիւանդ գալիս կար-
ծես, մի փոքր արթնանում էր, բայց նորան ճանապարհ
դնելուց յետոյ, կրկնն ձեռները գոտու տակը խրած, դրան
առջև յետ ու առաջ էր շարժում և երբեմն ճակատը
շփում: Վերջապէս երրորդ օրը ճաշին մօտ տացուս մեզ
ձայն տուեց. «Սմբատ, Սօֆի»: Մենք նստանք դասի նկա-
տելի էր, որ տացուի ճակատը պարզուել է, նա ուրախ է:
«Ճէ, ճուտիկներ, փորձենք» և նա գրեց տպագիր՝ «Քար»,
«Էս ի՞նչ է:» Ես սկսեցի «Քէ-այր-րէ» և կանգ առայ, այդ-
նոր խօսք էր: «Ասեցէք, ես որ «Քէ-այր-րէ» ի տեղ ըսեմ՝
քէ-ա-րէ, ի՞նչ դուրս կգայ: Սօֆին ասաց՝ «Քէարէ»: «Է ու
էն էլ որ թողնենք»: Ես վրայ բերի «Քար»: «Հա՛ւ, լա՛ւ,
լաւ, գտանք ճիճուներ, գտանք»: Այդ հնչական եղանակի
սկզբնապատկերն էր և մենք թէպէտ կաղէկաղ, բայց ար-
դէն գիտակցաբար և խրախուսուած առաջ էինք գնում, այն-
պէս որ շուտով երկուսս էլ վարժ կարդալ սովորեցինք:

Ինչպէս ասացի մենք դեռ մատաղ հասակից որբացած
էինք և որբան էլ հայրս քաղցրաբարոյ մարդ էր և իւր ժա-
մանակի վերաբերութեամբ, երբ ճիպոտը մանկան բարսա-

կանի միակ ղեկավարն էր, չափազանց զգայուն դեպի իւր զաւակների կրթութիւնը, բայց ով գիտէ, ի՞նչ ապագայ էր մեղ սպասում, եթէ զուրկ մայիսիք կրթութիւնից:

Քարեբաղտաբար մօրս փոխարինեց այրիացած հօրաբոյրս, Սանամ հօրբուրը: Այս կինը մի առանձին տիպար էր իւր շըջանի մէջ, սա իւր եղբօր հակապատկերն էր. բարձրահասակ, սուր հայեացըով և սուր լեզուի տէր, ոչ այնքան գեղեցիկ, որբան խելք և կամք արտայայտող դէմքով. նա իւր ձեռքն էր առել եղբօր ընտանիքի կեանքը և մենք փոքրներս գիտէինք և սովորած էինք, որ մեր դէմ տացուիս սպառնալիքները շուտանց որոտ էին, նա մի րոպէին յայտնում էր, թէ «կրակդ կը հանեմ» (կ'ապտակեմ), բայց րոպէն դեռ չ'անցած, յանցաւորին գրկում, վեր վեր էր թոցնում և գոռում՝ «այ կիտի», ճիճու, սիլլէն որ ուտէիր, խօս ճիճիլդ դուրս կուգարձ, բայց Սանամ հօրբուրի սպառնալիքը մի դատաւորի պատժի վճռու էր և պատժից փախչել անհընար էր: Երբ մեղանից մէկն ու մէկը ծանր հիւանդ էր լինում, ինչպէս այդ պատահեց ինձ մի անգամ, խստասիրտ Սանամ հօրբուրը երեք շաբաթով ղգեսար չը հանած, անկողին չէր մտնում, մինչև որ այնքան կազդուրուեինք, որ գիշերները այլ ևս իւր խնամքին կարօտ չլինէինք: Մենք այդ անյողողդ կամքի տէր կնորդից թէպէտ վախում էինք, բայց վախում էինք յանցանք գործելիս, իսկ եթէ անմեղ էինք և 'ի զուր մեղադրուած, համարձակ նրա թւեի տակն էինք մըտնում և նա իհարկէ, գիտէր պաշտպանել անմեղին և սևացսել սուտ գանգատուողին:

Ինչպէս ասի հայրս բժշկութիւն էր անում, բայց չը կարծէք, թէ խղճուկ հէքիմ Յովկսը, իրրև այցելութեան վարձ կանաչ և կապտագոյն թղթադրամներ էր հաւաքում, ոչ, նրա վարձը մի վառեկ էր, մի հաւ, մի քանի ձու և բացառիկ դէպբում, եթէ Զատիկը մօտ էր, մի գառն. այդ արդէն թէ նրա և թէ մեղ համար մի մեծ հրճուանքի առարկայ էր:

Հիւանդներին այցելելիս տացուն երբեմն ինձ կամ եղբօրս հետն էր տանում: Ահա մի օրինակ մեր տեսածից: Վաղ առաւօտ է, մի աղքատ կին ներս է մտնում մեր տուն, բարեկում և հարցնում է Սանամ հօրբուրին՝ «Ճացուն տունն

էր: — Տունն է, սանամեր, ի՞նչ է պատահեր: — «Խեղճ մարդուն լաւ բան ինչք պիտի պատահի, սանահօրդ իրիկունը անձաղ տուն հասցուցին, ոտը կոտրեր է, թէ դուրս ընկեր: Ես ի՞նչ գիտեմ, անդամալուծ վար է ընկեր: Տունը հաց չկայ ուտելու, եդ ցաւն էր մեղի պակասա: Հոյրս դուրս է գալիս, լուսմ է փայտհատի կնոջ պատմութիւնը և ինձ հետն գուած գնում գիւղացց թաղը: Բանում ենք մի փեղկանի առած ու ցածրիկ մի դուռ և երկու աստիճան ցած իշնելով, լսյն ու ցածրիկ մի դուռ և երկու աստիճան ցած իշնելով, մտնում ենք մի փոքրիկ բակ, այնտեղից էլ տուն: Տուն ասած բանը ամբողջ ընտանիքի միակ բնակարանն է, սա և և ննջարան և սեղանատուն և հիւրասենեակ, ինչ կամենաբ: Յատակը մերկ գետին է, տախտակի կամ սալի նշան անգամ չկայ, մի կողմում դրած են երկու երեք սնդուկներ, նրանցից բարձր պատին կպցրած են երկու կարգ դարակներ: Մի քանի պղնձէ և կաւէ ամաններով զարդարուած: Յարկի մէջ տեղից բառակուսի կտրած բացուածքի միջով ազօտ լսու է իշնում և մի անկիւնում խոտի վերսյ տարածուած անկողն նի մէջ պարկած: Է փայտհատ ներահամը, շուրջը նստած են երեկի կարեկցութիւնից ու հետարրքութիւնից հիւանդինին հաւաքուած մի բանի կանայք, եսկ մի փոքր հեռու տանտիկնոջ շուրջը կանգնած են պատառուած հագուստով, մէկը միւսից փոքրահասակ չորս, հինգ մոլորուած, նիհար երեխաններ:

— Բարով, սանահէր ջան, բարով, էս ի՞նչ բան է, ի՞նչ պառկելու ժամանակ գտար:

— Ի՞նչ էնեմ, բաւոր ջան, իմ կամքովս չեմ պառկեր, էս էլ իմ բաղդս էր, Հայրապետ աղոնց տունը փէտ կարելիս փէտերը վար թափան, ոտս տակը մնաց:

— Ոչինչ, ոչինչ, փորձանք է, ամենիս կարող է պատահել: Սանամեր, արի ոտը բաց: Սանահէր, քիչմ պիտի բեղչ չարչքեմ, ճաշը ինչ է, բիչ դիմացիր, տղամարդ ես:

Հայրս բննեց վասուած ոտքը և ասաց՝ բան չկայ, դուրս ընկած է, սանահէր ջան, աշքդ բանաս ու խիես, ոտդ էլի առաջուան ոտն է, իմացա՞ր:

Հոյրս հանեց պայուսակից մի բանի տախտակներ, կապոցներ և հիւանդին սիրտ առաջով փորձառու մարպիկութեամբ դուրս ընկած ոտը ուղղելուց յետոյ, փաթաթեց ու

տեղից վեր կացաւ:

— Լաւ գիմացար, սանահէր, էլ բան չկայ, բանիմ օր պառկիր, ոպեգ կը բանամ, էլի կացինդ առած, Աստուած կանչելով բանի կերթաս: Մնաք բարով:

Մինչև հիւանդի մօտից դուրս գալը դրացի կանայք հաւաքուեցին հօրս գլխին. մէկի երեխէն էր հիւանդ, միւսը դողացնում էր: Հայրս համբերութիւնով ամենքին ականջ էր դնում, մէկին խորհուրդ էր տալիս, միւսին պատուիրում էր գալ անից դեղ տանել: Մի խօսքով, երեք ժամ աշխատեցւց յետոյ, առանց մի կոպէկ վարձատրութեան, Աբրահամի մի երեխային հետաներս առած, վերադարձանք տուն: «Սանամ, մէկ դաստա հաց առւր պղակին տանի տուն, խեղճ Աբրահամը տունը աշխատաւոր չունի, մինչև ոտը լաւայ պղակները անօթի կը մեռնին»:

Երբ հիւանդը ազքատ էր և գաւառական բժշկին դիմու միջոց չունէր, հայրս օգնում էր նրան իւր ինելքը կարածին չափ: Բայց եթէ հիւանդը կարողութեան տէր էր, հայրս պահանջում էր գաւառական բժշկին հրաւիրել և ինքը երկրորդական դեր էր յանձն առնում: Նրան կշտամբում էին, թէ իւր օգուտը չէ ճանաչում, բայց նա պատասխանում էր:

— Բժիշկն էլ մարդ է և նրա ամէն մէկ օրը կրակ ու տանջանք է, լաւ սիրա ունեցող բժշկի կեանքը Աստուած թշնամուս չկամենայ, և նա էլ ապրուստի կարօտ է, պէտք է վարձատրութիւն ստանայ, բայց ուղիղը ըսեմ, արծաթասէր բժիշկը լաւ բժիշկ չի կարող լինել:

— Լաւ, դու ինքդ էլ ամէն ցաւի դեղը գիտես, ինչի՞ օգուտը ուրիշին տալ:

— Ամէն ցաւի դեղ գիտեմ, բայց ամէն հիւանդի ցաւը չեմ հասկնար:

— Գաւառական բժիշկը մի՞թէ ամէն ցաւ հասկացող է:

— Իհարկէ, չէ, բայց նա մարդու կազմուածքը ինձանից լաւ գիտէ և ներքին հիւանդութիւնները ուսում առած բժշկի գործ է: Ես դահիճ չեմ, որ օգուտիս համար մարդու կեանքի հետ խաղամ:

Այդ սրաի տէր մարդուն՝ արուեստը, իհարկէ, հաղիւ հազ էր միջոց տալիս իւր ընտանիքի ապրուստը հոգալու:

Սովորականից առաս տուրքի մի դէպք եմ յիշում միայն։ Գիւղական մի մեծ ընտանիքի հայր ձիթահանքի մէջ թեկի ոսկորները ջախջախել էր։ Սոյլի վերայ դրած նրան բերին մեր տուն, հօրաբրոջս հետ հայրս երկար խորհելուց յետոյ հիւանդին պառկացրեց քեռի պապի սենեակում։ Յիշում եմ հայրս գիշեր ցերեկ անդադար աշխատում էր և վերջապէս նրան յաջողեցաւ մի ամսում գիւղացու թեւը լաւացնել Քանի որ հիւանդը մեր տանը պառկած էր, ամէն որ կամ նրա որդիքը կամ կինը գիւղեց հիւանդին այցելելու էին գալիս և միշտ մեզ բերում էին՝ հաւ, ձու, կարագ, սեր, մածուն, կաթ, մի խօսքով, այդ միջոցին մենք լւլում էինք։ Խոկ երբ առողջանալուց յետոյ գիւղացիք հիւանդին տուն տարան, մի քանի օր անցած մեծ եղբօրս հետ մեր տան առաջեւը զայլիկ—դօլլայ էինք խաղում, տեսնե՞նք Կակոսենց տան մօտի նեղ փողոցից մի սև կով երևաց, նրա քամակից մեր հիւանդ գիւղացու որդին մի հորթի շլնքի թոկից բռնած և տռաջն առած, երկար ճիպոտ ձեռքին ձորն իջաւ և դէպի մեր տունը ծոեց։ Ես դեռ չհասկացած, թէ այս կովը, հորթը և նրանց բերողը ինչ գեր են խաղալու մեր կեանքի մէջ, լեր-դապատառ ներս վազեցի տուն, գոռալով՝ «Սանամ հօրբուր, կով բերին»։

—Տղայ ի՞նչ կով։

—Մւ կով, հօրբուր, սև կով։

Մինչեւ որ Սանամ հօրբուրը, ես և Սօֆի բոյրս դուրս եկանք դուռը, գիւղացին, կովը և հորթը կանգնած էին արդէն մեր շեմքի առաջ։ Բարեւ, Աստծու բարին, վերջապէս իրար առողջութիւն, անեցոց մասին հարց ու փորձ անելուց յետոյ, Սանամ հօրբուրը, որ, իհարկէ, հասկացել և ըմբռնել էր եղելութիւնը, հարցըց գիւղացը՝ «Օհան աղբէր, կովը ծախե՞լու ես բերեր»—Հէ, Սանամ բաջի, հէրս իրան տունն ու արտը կը ծախէր սև կովը չէր ծախեր, ես հէքիմին փէշքեաշ եմ բերեր։ Ես արդէն առանց այն էլ յուղուած էի, բայց գիւղացու խօսքերը լսելուց յետոյ, քիչ մնաց գէուեմ, լալագին ձայնով՝ դիմեցի Օհանին «Հորթն էլ»—Հորթն էլ հօրթն էլ, խօ՛ հօրթը մօրից ջոկելու տուն տանելու չեմ։

Կէս ժամ, համարեա՛, անցաւ մինչև մենք մեր փոքրիկ

Խելքով կշռեցինք եղելութիւնը և այն միջոցին, երբ Սանամ հօրբուրը գիւղացուն արդէն սաքիլի վերայ նստացրել և արաղով ու չարաղով հիւրասիրում էր, մենք դերերը բաժանեցինք Եղբայրս բուղէն առաւ գնաց աղբիւրից ջուր բերելու, ես իջայ ձորը խոտ բաղելու, իսկ Սօֆիին պատուիրեցինք հօրթին կարծ կապել դռան կողքի բարին, որ մորը չը ծնէ:

Այն միջոցին, երբ մեր դռանը խմբուած դրացոց ներկայութեամբ, մենք կովի և հորթի հոգսն էինք բաշում, Սօֆին ձայն տուեց՝ «տացուն եկաււ» ես մի ակնթարթում վազէ վազ նրա գիրկը թռայ: «Հա՛, ինչ է, ճիճու,» հարցնում էր հայրս, ինձ համբուրելով: Թէպէտ ես նկատեցի, որ նա էլ մի կերպ յուղուած էր և ինձ լաւ չէր լսում, բայց մինչև նրա տուն համնելը, ես կցկառը խօսքերով հասկացրի մեր գլխին եկած անցըը: Հայրս շահասէր չէր, բայց այս գեպըը, ինչպէս երևում էր, նրա վերայ էլ աղդեց, նա, երեկ մտածեց թէ ո՞րքան սննդի միջոց է աւելանում իւր փոքրիկների համար:

Մենք գոմ չունէինք, հայրս հասկացրեց մեզ թէ ինչ է հարկաւոր և մենք բոլորս ցրուեցինք ձորը և մի օրուայ մէջ այնքան բար կրեցինք, որ երկու օր չանցած, մեր տան դրսի պատի մօտ, դռան աջ կողմը հայրս մեր օգնութիւնով մի փոքրիկ գոմ շինեց մեր «սևուկի» համար, իսկ հօրթին պահում էինք բակում:

Եղբայրս, Յովհաննէսը, հոգեւոր դպրոցումն էր սովորում, հայրս նրա համար ինդիր էր ուղարկել Ներսիսեան դպրոցը ընդունելու, իսկ ինձ համար Լաղարեան Ճեմարանը: Որպէս զի, եթէ յաջողի այդ մտադրութիւնը, նա պատրաստ ունենայ մեր ճանապարհածախսը, Մուկուչի ձեռքով, հիւանդների բերածից ամէն աւելացած բան՝ հաւ ձու ևն բազար էր ուղարկում և ստացուած փողը Սանամ հօրբուրին էր յանձնում: Այդ մենք գիտէինք և կովն ու հորթը ստացած գիշերը ոչ եղբայրս և ոչ ես, համարեա՛, չը բնեցինք: Երկար միջոց մենք փսփսում էինք, թէ արդե՛օք կովն ու հորթն էլ Մուկուչ ափին պէտք է բազարը տանի՛ ծախելու: Մեր բաղդից առաւտեան հօրս և Սանամ հօրբուրի խօսակցութիւնից հասկացանք, որ «սևուկը» և «չալիկը» մալու են

տանը և պէտք է ծախսն միայն պաս օրերից և մեր բկերից աւելացած՝ կաթը, մածունը, կարագը և թանը:

Բայց ի՞նչ էր ստանում հայրս գուշակութեան արուեստից: Գուցէ նա փողով էր վարձատրում, որովհետեւ, ես չեմ յիշում, որ ըստ մեծի մասին երեկոյեան մթնին պյցելող գործատէրը հաւի, կովի և հորթի նման բան բերէին մեր տուն: Գուշակութիւն անելիս հայրս դուռը փակում էր և ոչ միայն մենք, այլ և Սանամ հօրբուրը, որ տան մէջ իշխող էր, իրաւունք չունէր իւր սուր քիթը այդ գործի մէջ խառնելու և միայն գործը վերջացնելուց յետոյ խեղճ տացուիս լրւանում էր «ինչ կէղի մէկ թըլսումը էլ բեզի հըմար գրես, ջեւբքէդ թաժանայ, մարգարէիս տեսէք, հաղին մալ ու դովլեաթ կուտայ, ինքը հողէ պլանի բեօշէն անօթի. կը կօնկոռնայ» Բայց հայրս իւր բանը գիտէր, առաջ ստացածը յանձնում էր Սանամ հօրբուրին, ասելով՝ «Էս տղոց ղեալլէն քցէ», յետոյ, երբ հօրբուրս այդ շօշափելի ընդդիմախօսութեան առաջ «տազ էր անում, հայրս շարունակում էր՝ «Սանամ, խելօթ եղիր, իմ էրածս անմեղ բաներ են, ես չեմ յարդարանար՝ խաբերայութիւն է, բայց առանց գիր բանալու, ես որ էդ մարդոցը ըսեմ օգնեցէք տղոցս ուսման հմար, ժանկոտ գուղմ չեն տար: Քանի օր մեր շէնիկը սընապաշտ է, ուսում չունի, առանց ֆալճու ու գրբացի չի մար: Մէկ բանմ կայ կուզէ Աստուած ընձի դժողքը զրկէ, տէյմօր աղոցը ճամբու չը դնեմ, վազ չեմ գար, դու էլ ընձնից տէյ էն օրը վազ արի»:

Պով երեխայ չէ եղել և չը գիտէ թէ ո՞ր ասաիձանի լարուած է լինում նրա երեւակայութիւնը, երբ թագցնում են նրանից մի հետաքրքիր բան: Ե՞կ դու երեխայի առաջ դուռը փակէ և դռան ետև մի խորհրդաւոր, հետաքրքրութիւն շարժող գործ կատարէ: Յովկհաննէսը հասակն էր առած, նա ի բնէ լուրջ էր և ինչ նրան չէր վերաբերում՝ քրքրել չը գիտէր, հօրս հմայութեան մասին խօսք բացուելիս նրանից լսում էինք՝ «Ձեր ի՞նչ բանն է, տացուն դուռը կողակել է, ինքը գիտէ իրան բանը, կորէք, թէ չէ դուրս կուգայ իրան կըսեմ»: Իհարկէ, Յովկհաննէսը չէր ասում տացուին, թէ ես ու Սօփին ականջներս դռանը դրած աշխատում էինք լսել թէ ի՞նչ են խօսում սենեակում, բայց և

այնպէս Յովհաննէսի բռնած դիրքը մեր հետաքրքրութիւնը չէր մարեցնում և մենք չափազանց ցաւում էինք, որ սենեակի դուռը շնուռած էր հին ու հաստ տախտակից և իմ ու Սօֆիի սուր ականջները ոչինչ չէին լսում թէ ինչ է կատարում ներսը։ Աերջապէս մի օր բացուեց մեզ հետաքրքրող գաղտնիքի մի մասը։ Ուշ երեկոյ էր, մենք բրդեցինք «սեռուկի» կաթը և կուշա ուտելուց յետոյ, գնացինք տացուի հետ «Եկեսցէ» ասինք ու ցրուեցանք մեր տեղերը քնելու։ Յովհաննէսը քեռիպապի սենեակը, Տուտիկը Սանամ հօրբուրի անկողինը, իսկ Սօֆին և ես թնարի կողքերին։ Ես վաղուց արդէն քնել, երազներ էի տեսնում, երբ Սօֆին ինձ զարթեցրեց. աչքերս բացի և մի քիչ արորելուց յետոյ հասկացայ, որ բան կայ։ «Վեր ել, խելա՛ռ, յօդի դուռը բացէ»։ Հայրս մոմը ձեռքին դուրս էր եկել ջուր տանելու և երեմի համարելով թէ բոլորեբեան քնել են, զգուշութիւն չէր ունեցել դուռը կրկին փակելու։

Երկուսս էլ ոտաքրիկ, մթնում, իրար ձեռք բռնած, պատէ պատ դիպչելով, մօտենում ենք հօրս դուան շէմբին և չորում դուան առջելի քարէ աստիճանի վերայ։ Ցան մէջ խոր լուսութիւն է տիրում։ Կուռմ է միայն հօրս և մի կնոջ խօսկցութիւնը.

— Մշտի ջան, դու հլը մէկ ճարմ ընձի էրա, ախր իքը հէջ տունը չի մար, դիշերները աղէրը քնին թէ չէ, կերթայ, լուսու դէմ տուն կուգայ։

— Էդ ո՞ւր կերթայ։

— Էն անզգամ լուացք էնող Ղումրիի քովը։

Կարճ լուսութիւնից յետոյ լսում է հօրս ճայնը՝

— Գիտե՞ս ինչ էրա... հա՛, Սեղաս աղէնսաղոցը շա՞տ կուզէ։

— Ո՞ւ, ի՞նչ կըսես, խելքը կերթայ, մէկ օրմ կրնա՞յ, առանց աղոցը ապրիլ։

— Լաւ, գնա՛ բան իմ օր հէրանցդ տուն, աղոցն էլ հետ տար, հօրդ բան մի ըսեր, երբ օր Մարկոս աղէն կուգայ աղոցը տեսնելու, դու հետը մի խօսիր, ի հարկէ խօսք կը բանայ, թէ ինչ է պատահեր, ըսայ, թէ էլ տուն չեմ գար տէյմօր Ղումրիից վազ չը գաս։

— Կեղնի՞ օր։

— Ինչի՞ չի եղնիր, ես գիտեմ որ նա ամաչկոտ մարդ

է, կը վախնայ որ ուրիշները իմանան, ել չի էներ:

—Մղտսի ջան, ահան քեզի մէկ ուռուրիէմ (տաճկական մանր ոսկի), ուր է, ըստ օր եղնի՝ ճակտիս ոսկոց թեաբերը ջոկեմ քեզի կուտամ: Մղդսի ոսկիքս գտայ, հմը բիլազուկներս կորան յէ:

—Ահա՝ բիլազուկներդ, առ թեերդ դի՞ր:

—Մեղայ, մեղայ, էս ուրտից:

—Երեկ տէքրսդ, համբարձումը, եկեր էր քովս, թէ հարստ ոսկիք ու բիլազուկներ է կորցուցեր, ոսկիքը գտեր է, բիլազուկները չը կան, կրնան իմանար ում քովն է: Մատածեցի, ես քեզի պատուիրեցի, որ մարդու չըսես, թէ ոսկիքը գտեր ես, համբարձումը էդ ի՞նչ գիտէ, թէ վերցնողը ի՞նքը չէ: Թասմ ջուր դրի մէջը աշեցի ու ըսի՝ բիլազուկները քու քովդ են, համբարձումն Յեղն ու տեղը բոնուաւ, հըմը սատանայ է յէ, հնարը գտաւ:

—Լաւ իմացար, կըսէ, գողցողը բերեց ընձի տուեց:

—Ի՞նչ նելօք ես, Մղդսի, ահան քեզի ուռուրիի թեաբը էլ: Ես ու Սոփին իրար գրդեցենք, հասկանալով, որ գործի վերջն է, նյոնպէս գաղտ ու գողի վերադարձանք մերտեղերը և հարևանցի քննելուց յետոյ, թէ ով է Սեղբուաղէն, ի՞նչ ասել է Ղումրիի մօտ է գնում ևն մտանք մերտեղերը, մանրամասնութիւնների զննութիւնը հետևեալ օրուան թողնելով: Բայց հետևեալ օրը ինձ համար չարաբաղդ օր էր: Հօրս սենեակի շէմքի մօտ չոգածս միջոցին, սաստիկ մրսել էի և ընկայ մի երկարատև հիւանդութեան մէջ, որի ժամանակ Սանամ Հօրբուրը անկողնիցս չէր հեռանում: Առողջանալուց յետոյ Սօփին պատմում էր ինձ, թէ ինչպէս ապօռութեան մէջ ես զառանցում էի՝ բիլազուկները գտան», «Սեղբուաղէն Ղումրիի քովը կերթայ», «Ցացուն երկու ուռուրիա ունի» ևն, թէ այդ զառանցանքները լսող Սանամ Հօրբուրը ի՞նչ էր մտածում և ինչ հասկացաւ, ինձ յայտնի չէ, լսու որում նա ինձ հետ ոչինչ չէր խօսում դրա մասին: Միայն մի բան, որ առաջ Հօրբուրս իրան երբէք թոյլ չէր տար, այդ այն է, որ իմ առողջանալուց յետոյ, հմայութեան համար Հօրս դիմողներին, Սանամ Հօրբուրը անխնայ ճանապարհ էր դնում Հօրիցս ծածուկ:

Բացի յիշածս «կապուտ» պահարանից Հօրս սենեակի:

մէջ կար և «Ճերմակ» անունով մի պահարան, որի բանալին միշտ հօրս մօտ էր և որի մէջ զետեղուած էին տացուի դեղաբայրը, գործիքները, կշեռքներ, մի խօսքով մի փոքրիկ դեղատուն։ Հայրս, ինչպէս սովորական է ասիական հէքիմներին, միաժամանակ թէ բժիշկ էր և թէ դեղագործ։ Նիւթերի մեծ մասը նա գնում էր տեղական մանրավաճառներից, իսկ ինչ որ կարող էր նա գտնել բաղաքի շրջակայքում կամ մօտաւոր գիւղերի գաշտերում և լեռների վերսյ, ինքն էր անձամբ հոգում, գարնան սկզբից մինչև ձմեռ շրջելով։ Այդ շրջագայութեան միջոցին նրան անփոփոխ ուղեկից էինք ես և եղայրս։

Երբ ինձ այժմ պատահում է լսել կամ կարդալ, թէ այս կամ այն ուսումնարանի աշակերտաները իրանց ուսուցիչների առաջնորդութիւնով ուղևորում են բնութիւնը իմաստասիրելու, յիշում եմ մեր ուսուցչապետ տացուին, որ առանց կանխակալ նպատակի և ծրագրի, միայն կարիքից սահմանած, իւր որդոց հետ դաշտից դաշտ, սարից սար քաշ էր գալի և բոյսեր, արմատներ, ծաղիկներ ու տերեւներ էր հաւաքում։

Ահա շաբաթ երեկոյ է, հայրս եկեսցէն սովորականից վաղ է վերջացնում և երեսը խաչակներուց յետոյ ասում է՝ «Յովհաննէս, Սմբատ, առաւտառուն կանուխ պիտի վեր ելնէք, Ղանլիջա երթանք»։ Մենք ուրախութիւնից վեր վեր ենք թռչում, իսկ Սօֆին, առաւել ևս Տուտիկը նախանձով լցուած մեր երեսներին են նայում։ Տացուի գթառատ հոգին փոքր ինչ շփոթւում է, տեսնելով տղայոց բերկրութիւնը և աղջկերանց տերած դէմքը։ Ան՝ վկէ, մեծ բան է, ինչ վեր վեր կը թռնիք, եքուան իրիկուն դադրած տուն դառնալիս շան պէս լեզուներդ հեալապիմ պիտի կանէք, ինչ դոլս բան է ոտով Ղանլիջայ երթալ գալը։ Արի տեսնեմ, Տուտիկ ջան, Վարդեռին ես ձեզի արաբով Զեաջուռ կը տանիմ, գառ կը մորթենք, գաթա, բաղամ կը վերցնենք հետաներս, երեք օր կը մանք էնտեղ»... և նա համբուրում է Տուտիկին, նրա սիրտը առնում, յետոյ ուղարկում է մեզ քնելու։

Դեռ չլուսացած ես ու Յովհաննէսը ոտքի ենք։ Սահմամ հօրբուրը մեզ «դիւահարներ» անուանելով տեղից վեր է

կենում, մի պարկի մէջ պանիր ու կաթնահունց է գնում, մեղ համար երկար գուլբէք է հանում, տացուի համար մի փոքրիկ շնչ մէջ փելինի արաղ է լցնում և գնում է նրան ձեւ տալու։ Աղջկներին չը զարթեցնելու համար գողի նման լուր դուրս ենք գալիս տնից և ճանապարհ ընկնում։

Քաղաքի միջով անցնելիս խանութների գիշերապահները ձայն են տալիս, պարկած տեղից գլխները վեր են բարձրացնում։ Տացուն բարեւում է նրանց, ամենքին ձայնից ճանաչելով՝ գիշերապահները բարի ճանապարհ են մաղթում, կրկին փաթաթւում են մուշտակների մէջ և խռմիում։

Ահա դուրս եկանք Կարմիր զուլի դաշտը։ Արևելքից քաղաքը բոլորող սարերի գագաթները սկսում են շառագունուիլ, մի հով զեփիւռ երեսներիս է դիպչում և ցնցում է մեր մարմինը։ Ակսում է լյսի և խաւարի պատերազմը և, ինչպէս միշտ, խաւարը խոնարհում է լյսի առաջ և արևի աղօտ լյսը բաց է անում մեր աչքերին տաճկական սահմանի վերայ գծուած բարձրութիւնները, բայլ առ բայլ արշալյսը պարզում է թեւերը Շիրակի դաշտի վերայ և մի վարդագոյն ծածկոց փռում է սար ու ձորի, դաշտ ու արօտների երեսին։ Մենք ծուռում ենք դէպի ձախ և հասնում Արփաչայի ձորի ափին։ Դեռ ձորը չիջած, հայրս կանգնում է, չորս կողմից բարձրանում է թռչնոց զղւղունը, տացուն զմայլած իւր շուրջն է նսյում և յափշտակուած իւր այրական ձայնը մեր քնքոյշ ձայների հետ խառնած «Առաւալ լուսոյ» է սկսում։ Ո՞հ, ո՞քան արագ են բարախում մեր սրաերը, այս բազցր փառարանութիւնը, լյսի ճառագայթներից նոր արթնացած բնութեան արձագանքն է թւում, մենք ոգեսորուած ենք. նայում եմ հօրս երեսին, որքա՞ն զդացուած է նա, Յովհաննէսի կերպարանքը ցոյց է տալիս, որ բնութիւնը ամբողջովին սպունգի նման կուչ է եկել նրա փոքրիկ սրաի մէջ և այստեղ եռացնում է նրա արիւնը։

Մեղ երկու կողմն առած հայրս նստում է մի ժայռի վերայ, լցնում է իւր ծխափողը, կուշտ ծծում և ոտքի է կանգնում։ «Դէ ձորն իջնենք»։ Մենք կամաց կամաց, մեր շուրջը նայելով, իշնում ենք դէպի գետը։ Հայրս կանգնում է այստեղ այստեղ, սրած փայտով հանում է գետնից մի որւիցէ բոյս և կարծես, ինքն իրան հետ խօսելով, բոյսի

անունն է տալիս, պատմում է, թէ նա երբ է ծաղկում, ինչպէս է բազմանում, ինչպիսի արմատ ունի և վերջապէս թէ ինչ ցափի դեղ է։ Այդպէս՝ բյուեր, ծաղիկներ, տերևներ կամ արմաններ հաւաքելով մենք Արփաշայի հոսանքի դէմ շարժւում ենք ձորն 'ի վեր և վերջապէս հասնում Ղանլիջայ։ Զը նայելով մեր յօգնածութեանը մտնում ենք վանքը և պատարագը վերջանալուց յետոյ ծերունի քահանայի և մեր բարեկամ Սամսոն քէհի հետ ուղղում ենք դէպի վերջինի առունը։ Քահանան օրհնում է սեղանը և նստում ենք ճաշի։ Հայրս հանում է գրպանից փելինէ արաղի շիշը, մեծերը իրար երկար բարեմաղթութիւններ անելով, մի մի թաս արաղ են խմում, յետոյ, երկու ելեք մեծ չանաղների մէջ լքցրած, թանով սպասի մէջ բրդում են լաւաշ հացը և սկսում են փայտէ դրգաներով ուտել։ մենք հետևում ենք նրանց օրինակին և սպասում ենք համեղ կերակուրին։ Մինչև ձուաձեղը կմերեն մենք ախորժակով ուտում ենք՝ սեղանի վերայ դրած պանիրը, սերը և ոչխարի մածունը, վերջապէս ահազին ձուաձեղը կուլտալուց յետոյ, մենք ոտնկայ լսում ենք սեղանի օրհնութիւնը և մեծերին թողնելով, տանահիրոջ մեզ հասակակից աղոց հետ շըջում ենք գիւղամիջին, խաղում և մի փոքր հանգստանալուց յետոյ ձորն իջնում։ Գետի մէջ մի լաւ լող ալլուց վերջը, զուարթացած, կազզուրուած վերադառնում ենք Սամսոն քէհի առունը։ Տացուն մեզ է սպասում։ Տան աիրոջը մաս բարով ասինք և ճանապարհ ընկանք դէպի տուն։ Մինչև ձորից դուրս գալը հայրս պատմում է մեզ վանքի անցեալը։ Զորը վերջացաւ և մեր առաջ բացուեց Շիրակայ դաշտի մեծ մասը շըջապատուած լեռներով, հեռու-հարաւ-արևելքում բարձրանում է ծերունի Արագածը։ Այս անգամ հայրս շըջապատող սարերի և երևացող գիւղերի անունն է տալիս։ Հասնում ենք Կարմիր Ղուլին, պյանեղից թեքում ենք դէպի հարաւ և հասնում ենք տուն։

Սօֆին և Ցուարիկը մեզ անհամբեր սպասում են և դեռ հեռուից՝ մեր դէմ են վազում։ Նրանց համար մենք հեաներս սեր և երիմնակ ենք բերել։ Մեր տան դռան կողքի մի բարի վերայ Սանամ հօրբուրն է նստած, իսկ միւսի վերայ, միշտ ժպիտն երեսին՝ Հոգևոր Կառավարութեան բարտուղարը։

— Բարով, բարով, Սիմոն աղայ, ես ի՞նչ է հրաշք ե,
որտեղից որտեղ միտքդ ընկանք, խէր է Աստուծով։

— Խէր է խէր, մահտեսի, տե՛ս իմ ոտովս եմ եկեր աչ-
քի լուս տալու, Էնքան ուրախացեր եմ, Էնքան, որ էլ մի
ըսե՞ր։

— Եդ ի՞նչ է, Սիմոն աղայ, ըսայ մենք էլ ուրախանանք։

— Կեցիր, զուրբան քեղի, մէկ էդտեղ նստի՞ր։

Հայրս նստեց Սանամ հօրբուրի կողքին Սիմէոն աղէն
մի լաւ ոռոշտաց, ծոցից քթախոտի տուփը հանեց, մի եր-
կու անգամ ցուցամատով զարկեց, յետոյ մի սուր ճռուցով
բաց արաւ և մեկնեց հօրս։

— Մէկ բաշէ, տե՛ս ինչ բռնօթի է, ձեռքովս եմ շիներ։

Ինքն էլ աշքերը ուշադրութիւնով տուփի մէջ չոեց և
զգուշութիւնով մի պաղունց վեր առաւ, բաշեց պնչերը, բը-
թով էլ քնթի մէկ և միւս կողմը սեղմելով քիթը լքցրած
քթախոտը ներս քաշեց և ծնօտները երկու անգամ բաց ու
խուփ անելուց յետոյ՝ «յա—հու, յա—հու արաւ և հօ-
րըս փոշտոցը լսելով դարձաւ նրա կողմը։

— Օխա՛յ, օխա՛յ, առողջութիւն, մահտեսի, տեսա՞ր բըռ-
նոթին, վարդի հոալը կիմանաս։ Յըպ՛ը, բռնօթին մէկ ուրիշ
բան է, գիտե՞ս. մարդու բէյնը կը բանայ, աչքի լուսը
կաւելցնէ։ Հմը, պէտք է հոտ էլ ունենայ, որ փոշտալիս
պնչերէդ դուրս գայ։

— Ե՞, էդ ո՞ւր էկը գնացեր։

— Տղոցը Ղանիջայ էի տարեր։

— Լա՛ւ, լա՛ւ, շատ լաւ, ընդունական եղնի։

Նա հանեց գլանաձև կոլորած կապտագոյն թաշկինակը,
կամաց բաց արաւ, քիթը սրբեց. կրկին առանց շտապելու
նոյն կարգով կոլորեց։

— Ե՞, է դպէս, Ղանիջայ էկը գնացեր։

Սանամ հօրբուրը համբերութիւնը հատած, յուսա-
կտուր տեղից վեր կացաւ և ուղում էր հեռանալ։

— Կեցիր, կեցիր, Սանամ բաջի, ո՞ւր կերթաս, ախ՛ը
լաւ խաբար եմ բերեր։

— Տէ՛ ըսայ իմանամ, սահաթմ է կը սպասեմ։

— Ամէն բանը իրան կարգով, որ շտապա՛ր ի՞նչդ պի-
տի աւեխայ։ Զէ, նստի՞ր, նստի՞ր, տե՛ս ինչ պիտի ըսեմ։

Հա, մահտեսի ջան, էս օր առաւօտուան ժամեն դուրս կու-
գամ, աեսնիմ ժամեկոչ Սէրոբը առաջս կարեց՝ «Հայր սուր-
բը քեզի կը հարցնէր»։ Ի՞նչ կայ, կըսեմ։ Կըսէ. զշիտեմ
ինչ կայ։ Լաւ, երթամ ըսի, հմը, ջանմ, բանիմ ոտ էն-
դին գնացի, աեսնիմ, Փայլվանենց հաջի նազարը առաջս
կարեց. «Ողորմի Աստուած, Սիմոն աղայ», — ողորմի ծնողացդ
կըսեմ։ — «Ո՞ւր առաջ բարի»։ Հայր սուրբը կանչեր է, կը-
սեմ։ — «Ի՞նչ կայ որ»։ — Զեմ գիտեր, կըսեմ։ — «Զեղնի» մեր
Մկրտիչի պատկի հրամանն է ստացեր»։ — Զեմ գիտեր, կը-
սեմ։ — «Աստուած սիրես, թէ էն հրամանն է, յետև զըր-
կէ»։ — Լաւ, կըսեմ։ Քիչմ էլ գնացի.

Հայրս էլ չը կարողացաւ համբերել։

— Սիմոն աղա, Հայր սուրբի բովն որ եկար, ի՞նչ ըսաւ
քեզի։

— Եդ ի՞նչ թէզ հասար Հայր սուրբի բովը։

— Գիտեմ, որ դու թէզ չը հասար, բայ խօ աեսար
նրան։

— Իհարկէ, աեսայ. . . . կեցի՛ր, ի՞նչ պիտի ըսէի. . . . աես
խօսքիս թելը կարեցի՛ր, հիմի պիտի յետ դառնամ, նորէն
պատմեմ, որ բանը աեղը դայ։

Պէտք էր աեսնել տացուի և Սանամ հօրբուրի սարսափը։
Հայրս աեղից վերկացաւ։

— Սիմոն աղա, ի՞նչ թել կարել, Հայր սուրբի ձեռքը
որ համբուրեցիր ու նստար, չէ որ թուղթը հանեց, քեզի
տուեց։

Սիմոն աղէն աեղից վեր թռաւ և ճիշտ զարմացական
նշան դարձաւ։

— Ո՞ր թուղթը, դու ի՞նչ գիտես, վէջ ըսաւ, ես գի-
տեմ էդ էն անիծած գրագիր Թորոսի բանն է։ Զոլալ, փուչ։
Խնչքան աղաշեցի, թէ մարդու բան մի ըսեր, ես ինքս պի-
տի երթամ մահտեսուն աչքի լուս տամ։ Է՛հ, ի՞նչ էնէնք,
եղածը օրհնած, էդ ո՞րն է Յովհաննէսու։

Հայրս հասկացաւ և գունաթափուեց։

— Ո՞ւր է, ո՞ւր է թուղթը։

Սիմոն աղէն ձեռքը տարաւ ծոցը, թուղթը հանեց և
ուղում էր Թաշկինակի նման երկար ու բարակ բաց անել,
բայց Հայրս իւեց ձեռքից թուղթը, բաց արաւ, մի բանի

առղ կարդաց և յետ յետ գնալով քարի վերայ նստեց, նրա
աչքերից սկսեց արտասուբ հոսել:

— Փառք բեղ Աստուած, փառք բեզ: Սանամ ջան, Յով-
հաննէսին ընդուներ են Ներսիսեան դպրոցը:

Այդ երեկոյ մի մեծ ուրախութիւն էր մեր տանը: Սի-
մոն աղին առօք փառօք ներս տարան, առաջին տեղը բազ-
մեցրին: Մուկուչ ափուն ուղարկեցին որ գինի բերէ և Տէր
Յակովին ու Գասպար Խալֆին հրաւիրէ: Երբ հիւրերը հա-
ւաբուցան, ուրախ, ուրախ դրկախառնեցին Յովհաննէսին
և տացուիս հետ համբուրուելուց յետոյ սեղան նստան,
հայրս դարձաւ Սիմէոն աղին:

— Սիմէն աղա, դու ի՞նչպէս հաւատացիր, թէ ես գրա-
գիր Թորոսին տեսեր եմ, չէ՞ որ ես էս օր Ղանլիջայ էի...

— Վայ, վայ, վայ, զո՞րդ, յէ, տե՞ս, ինչպէս ընձի
Խարեց, է լաւ չեղաւ, չը թողիր բանը կարգով պատմեմ:

— Շատ լաւ եղաւ, Սիմէոն աղի կենացը, տառոսը քու
Ներսէսիդ:

— Ամէ՞ն, ամէ՞ն: Բոլորեքեան բարձրացրին լիք լիք
բաժակները և մինչև տակը բամեցին Սիմէոն աղի կենացը:

Օգոստոսի վերջին Յովհաննէսին Ճանապարհ Դրինք Տիկինիս:

Մօրս մահից յետոյ, որ մեր փոքրերիս վերայ մեծ աը-
պաւորութիւն չէր կարող թողնել, Յովհաննէսի մեղանից հե-
ռանալը մեր առաջին զգալի վիշտն էր: Երկար միշոց մեծ և
փոքր մի տեսակ մոլորուածների նման էինք շրջում: Ամէն-
քից աւելի հայրս էր ախրած: Յաճախ կրկնում էր նա, որ-
դուն միտը բերելիս, և ել ես նրան չեմ տեսներ: Սանամ
հօրբուրը բարկանում էր այդ խօսքերի վերայ, բայց հայրս
հեղ ձայնով կրկնում էր, ևսիրտս վկայում էա:

Հասաւ և ձմեռը: Մենք փակեցինք դռները և մի տե-
սակ պատսպարւում էինք ցրտից: Փետրուար ամսին նոյն ձե-
ռով հայրս մի թուղթ ստացաւ, թէ ես նշանակուած եմ
կանդիդատ Լաղարեան Ճեմարանը ընդունուելու, ուրեմն երբ
երկրորդ թուղթը ստացուէր, ես էլ հեռանալու էի անից:

Ապրիլ ամիսն էր, հայրս հարինքով մի հիւանդ ունէր,
հիւանդին նա օգնեց, բայց մի բանի օրից ինքն էլ անկո-
ղին մասւ Կարծես, զգում էր տացուս, որ իւր վերջն օ-
րերը հասել են Մինչև ուշքը գեռ վերան էր, շարունակ
պատուէրներ էր տալի Սանամ հօրբուրին, թէ ինչ պէտք է
անէ իւր մահից յետոյ, յանձնարարում էր եղաօր՝ Մար-
կոս աղայի խորհրդով շարժուել և երբ մի օր Սանամ հօր-
բուրը յայսնեց նրան, թէ եղայրը ուզում է իրան տես-
նել՝ միանդամայն արդիլեց, ասելով. «Ի՞նչ օգուտ, Մարկոսն-
էլ կը հիւանդանայ, դու կուզե՞ս, որ երկուսս էլ մռւնենք»։
Թէ գաւառական և թէ բերդի բժիշխները ամեն ջանք գործ-
դրին հօրս փրկելու, բայց իզուր, նա շուտով կնքեց իւր-
մահկանացուն և մենք որբերս մացինք Սանամ հօրբուրին-
շնբին մի ծանր լուծ։ Թէպէտ հօրեղբայրս օգնում էր մեզ,
բայց առանց հօրբուրին մենք, իհարկէ, կորած էինք։ Կը-
կիծը մեծ էր։ Անցել են արդէն շատ տարիներ, բայց ա-
ռանց արտասուքի մինչև օրս էլ չեմ կարող հօրս մտարե-
րել։ Ուրեմն ինչքան մեծ ցաւ էինք զգում որբերս, երբ նրա-
կորուսաը գեռ նոր էր։

Կ. Զ.

